

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Պատմության օլիմպիադայի մարզային փուլ (2018-2019 ուստարի)
12-րդ դասարան (տևողությունը՝ 150 րոպե)

ա) Հայոց պատմություն (15 միավոր)

1. Ե՞րբ է ավարտվել հին քարի դարը Հայկական լեռնաշխարհում. 0,5 մ.
 ա/ Ք. ա. 12-րդ հազ. բ/ Ք. ա. 10-րդ հազ.
 գ/ Ք. ա. 8-րդ հազ. դ/ Ք. ա. 5-րդ հազ.
2. Կիլիկյան Հայաստանի ո՞ր իշխանի օրոք է Սիսը դարձել իշխանության կենտրոն. 0,5 մ.
 ա/ Ռուբեն Ա բ/ Թորոս Բ
 գ/ Մլեհ դ/ Լևոն Մեծագործ
3. Նշված տարածքներից ո՞րը չէր անցնում Ռուսաստանին Թուրքմենչայի պայմանագրով. 0,5 մ.
 ա/ Օրդուբադ բ/ Երևան
 գ/ Ախալքալաք դ/ Նախիջևան
4. Ո՞վ էր ղեկավարում կառավարական ուժերը Մայիսյան ապստամբության ժամանակ. 0,5 մ.
 ա/ Դրո բ/ Սեպուհ
 գ/ Համազասպ դ/ Անդրանիկ
5. Ե՞րբ է ստեղծվել ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Հայաստանի մասնաճյուղը. 0,5 մ.
 ա/ 1924 թ. բ/ 1935 թ.
 գ/ 1941 թ. դ/ 1943 թ.
6. Որքա՞ն է 1949 թ. Անդրկովկասից Ալթայի երկրամաս արտրված հայերի թիվը. 0,5 մ.
 ա/ 3 000 բ/ 3 620
 գ/ 15 000 դ/ 15 500
7. Ո՞վ է դարձել ՀԿԿ կենտկոմի 1-ին քարտուղար 1960 թ. դեկտեմբերին. 0,5 մ.
 ա/ Անտոն Քոչինյան բ/ Սուրեն Թովմասյան
 գ/ Յակով Զարոբյան դ/ Գրիգոր Հարությունյան
8. Ե՞րբ է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը մերժել ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ին վերամիավորելու խնդրանքը. 0,5 մ.
 ա/ 1988 թ. փետրվարի 10 բ/ 1988 թ. հունիսի 15
 գ/ 1988 թ. հուլիսի 18 դ/ 1988 թ. նոյեմբերի 24
9. Ո՞ր պատմիչն է այս խոսքերի հեղինակը. «Եվ տիրապետեց նա բազմաթիվ բերդերի և գավառների Վայոց ձորի, Խաչենի և Փառիսոսի սահմաններում՝ ավելի քան իր եղբայրը...»: 0,5 մ.

10. Ո՞ւմ ելույթից են մեջբերված հետևյալ խոսքերը. «Լեռնային Ղարաբաղը մշտնջենապես բնակեցված է եղել հայերով, և նրանց հայրենիքի մի հատվածն է, որը, Ստալինի մեղքով հայտնվելով Ադրբեջանի կազմում, 65 տարի շարունակ ենթարկվել է ստորացման, վիրավորանքների ու ամեն տեսակի ճնշումների...»: 0,5 մ.

11. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
 ա/ Սմբատ Աշոտյանի գահ բարձրանալը Սյունիքում:
 բ/ Կարսի և Սյունիքի թագավորությունների հպատակվելը սելջուկ-թուրքերին:
 գ/ Գագիկ Բ-ի մեկնումը Կոստանդնուպոլիս:
 դ/ Աշոտ Դ-ի մահը:
 ե/ Դվինի միացումը Բագրատունյաց թագավորությանը:
 զ/ Տրապիզոնի բյուզանդա-վրացական բանակցությունները:
 է/ Դավիթ Կյուրապաղատի մահը:

- ը/ Սյունիքի թագավորության վերացումը:
- թ/ Վասպուրականի թագավորության անկումը:
- ժ/ Կարսի հերոսական դիմադրությունը սելջուկ-թուրքերին:

1	2	3	4	5	6	7	8	9	10

12. Համապատասխանեցրե՛ք հասկացություններն իրենց բացատրությունների հետ.
1. Կիլիկյան Հայաստանի արքունի քարտուղարության գլխավոր պաշտոնյան
 2. զինվորական աստիճան Կիլիկիայում, որը ստանալու համար անհրաժեշտ էր քննություն հանձնել ձիավարությունից, նետածությունից, նիզակի և սրի գործածությունից
 3. արքունի պալատի կառավարիչը
 4. կիլիկյան բանակի սպառազինության և պարենի մատակարարման ղեկավարը
 5. պատերազմի ժամանակ գյուղացիներից և քաղաքացիներից հավաքագրվող զորք
 6. արքունական հեծելազորի հրամանատարը Կիլիկիայում

ա. մարաջախտ բ. սպասալար գ. աշխարհազոր դ. սենեսկալ ե. ասպետ զ. կանցլեր
1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)

1	2	3	4	5	6

13. Տրված պնդումների համար ընտրե՛ք «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» տարբերակներից մեկը:
- ա/ 11-րդ դ. 2-րդ կեսին հայերը մեծամասնություն էին կազմում, Եփրատ գետից արևմուտք գտնվող շրջաններից բացի, նաև Կիլիկիայի, Կապադովկիայի, Ասորիքի և Հյուսիսային Միջագետքի մի շարք շրջաններում:
- բ/ Կիլիկիայում ապրում էին նաև հույներ, ասորիներ, արաբներ, վրացիներ, հրեաներ, սակայն 11-րդ դ. վերջերին Կիլիկիայի բնակչության գերակշիռ մասը հայերն էին:
- գ/ Դաշտային Կիլիկիայի հիմնական մասը ծովի մակերևույթից բարձր է մոտ 150-200 կմ և աշխարհի արգավանդ դաշտավայրերից մեկն է:
- դ/ Ապլլարիպ Արծրունուն են պատկանել Ադանա, Մսիս, Տարսոն, Լամբրոն, Պապեռոն և Անտիոք քաղաքները:
- ե/ Գագիկ Աբասյանն իր թագավորության դիմաց Բյուզանդիայից ստացել է Արևելյան Տավրոսում գտնվող Ծամնդավ բերդաքաղաքը:
- զ/ Փիլարտոս Վարաժնունին Ասորիքի և Կիլիկիայի արևելյան շրջաններում հիմնել է ընդարձակ հայկական իշխանություն, որի կենտրոնը Մարաշ քաղաքն էր:

1,5 մ. (յուրաքանչյուր ստույգ պատասխանը՝ 0,25 մ., ոչ ստույգը՝ — 0,25 մ., իսկ բոլոր «Չգիտեմ» պատասխանները՝ 0 մ.)

	1	2	3	4	5	6
Ճիշտ է						
Սխալ է						
Չգիտեմ						

14. Տրված պնդումների համար ընտրե՛ք «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից մեկը:
- ա/ 9-րդ դ. վանական և ծխական դպրոցների հիման վրա ձևավորվում էին վարդապետարաններ:
- բ/ Սանահինի և Հաղպատի վարդապետարաններում իրենց գիտամանկավարժական գործունեությունն են անցկացրել ժամանակի նշանավոր գործիչներ Վարդան Արևելցին, Հովհաննես Երզնկացին և Թովմա Մեծոփեցին:
- գ/ Նոր Գետիկի վարդապետարանում կրթություն է ստացել նշանավոր պատմիչ Վարդան Արևելցին:

դ/ Կաթոլիկ քարոզիչների հիմնած հոգևոր-մշակութային կենտրոններից էին Ծործորի և Քոնայի դպրոցները:

ե/ Սկևռայի դպրոցը, որտեղ դասավանդվող առարկաների շարքում առանձնահատուկ տեղ էին զբաղեցնում մանրանկարչությունը, երաժշտությունը և գրչության արվեստը, հիմնադրել է Ներսես Շնորհալին:

զ/ Հայ քանդակագործության, ճարտարապետության և հատկապես աստվածաբանության զարգացման գործում մեծ դեր խաղաց Հռոմկլայի կաթողիկոսարանին կից դպրոցը:

1,5 մ.

	1	2	3	4	5	6
Ճիշտ է						
Միայն է						
Չգիտեմ						

15. **Շարադրանք 1. ներկայացրե՛ք Հայրենական մեծ պատերազմում հայկական ազգային դիվիզիաների կազմավորումը և մարտական ուղին, ինչպես նաև պատերազմի հայ հերոսներին և զորահրամանատարներին:** 2,5 մ. (ստուգման նվազագույն քայլը՝ 0,25 մ.)

16. **Շարադրանք 2. ներկայացրե՛ք հայ-հռոմեական պատերազմի երկրորդ փուլը և Արտաշատի պայմանագիրը:** 2,5 մ. (ստուգման նվազագույն քայլը՝ 0,25 մ.)

բ) Համաշխարհային պատմություն (5 միավոր)

1. Ո՞րն է էլամի մայրաքաղաքը. 0,5 մ.
 ա/ Սուսա
 բ/ Էքբատան
 գ/ Պերսեպոլիս
 դ/ Բաբելոն
2. Նշվածներից ո՞վ Վերածննդի գործիչ չէ. 0,5 մ.
 ա/ Դանթե
 բ/ Դոնաթելո
 գ/ Գրոտիոս
 դ/ Միքելանջելո
3. Ե՞րբ է ավարտվել Երկրորդ աշխարհամարտը. 0,5 մ.
 ա/ 1945 թ. մայիսի 8
 բ/ 1945 թ. մայիսի 9
 գ/ 1945 թ. սեպտեմբերի 1
 դ/ 1945 թ. սեպտեմբերի 2
4. Ո՞վ է Հռոմեական կայսրության առաջին կայսրը. 0,5 մ.
 ա/ Հուլիոս Կեսար
 բ/ Օգոստոս Օկտավիանոս
 գ/ Տրայանոս
 դ/ Ներոն
5. Ո՞ւմ հրամանով է կառուցվել Թաջ Մահալ կոչվող մզկիթ-դամբարանը: 0,5 մ.

6. Համապատասխանեցրե՛ք պատմական գործիչներին իրենց պետության հետ. 1 մ.
 1. Դ. Լ. Ջորջ
 2. Օ. Բիսմարկ
 3. Ժ. Կլեմանսո
 4. Զ. Ներու
 5. Ֆ. Ֆերդինանդ
 6. Զ. Գարիբալդի

ա. Ֆրանսիա բ. Գերմանիա գ. Անգլիա դ. Հնդկաստան ե. Իտալիա զ. Ավստրո-Հունգարիա

1	2	3	4	5	6

7. Տրված պնդումների համար ընտրե՛ք «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից մեկը:
- ա/ Բաբելոնիայի արքա Համմուրապին (թ.ա. 1263-1234 թթ.) միջազգային իրավունքի պատմության մեջ առաջին հիմնավոր փորձն է կատարել իրավական պետության ստեղծման ճանապարհին:
- բ/ Անտոնինոսների հարստության հիմնադիր Տրայանոս կայսրը (98-117 թթ.) նվաճել է Դակիան, Միջագետքը և պարթևների մայրաքաղաք Տիգրանը:
- գ/ Խաչակրաց երրորդ արշավանքի ժամանակ խաչակիրները գրավել են Կոստանդնուպոլիսը:
- դ/ Արդյունաբերության մեջ իսկական հեղաշրջում է առաջացրել շոգեշարժիչի գյուտը, որի հեղինակն անգլիացի Ջեյմս Ուատտոն էր:
- ե/ 1941 թ. դեկտեմբերի 7-ին ճապոնական ուժերը հանկարծակի գրոհեցին Հավայան կղզիներում տեղակայված ամերիկյան Պիրլ Հարբոր ռազմածովային խոշոր հենակայանի վրա:
- զ/ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից 1954 թ. ընդունվել է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը:

1,5 մ.

	1	2	3	4	5	6
Ճիշտ է						
Սխալ է						
Չգիտեմ						

Հանրապետական օլիմպիադայի
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

05.03.2019 թ.